

Բարեկալնից դէպի Խելքատան տանող հին պողոսայից քիշ դէպի հարաւ է գտնուում, մի մեծ պարսիկ զօրաբանակ էր ժողովուել, Այսուղ մի մեծ ճակատամարտ տեղի ունեցաւ (640, 641 կամ 642), ուր արարացիք նախ նումանի և ապա, նրա ընկնելուց յիսոյ Մեկկացի Հուգայի առաջնորդութեամբ փառաւոր յաղթութիւն տարան, Նեհաւէնդի յաղթութիւնը մուլեմները կոչում են «յաղթութիւն յաղթութեանց», Սրանով պարսից աէրութիւնը բոլորովին ջախճախուած էր, Իրաւ է արարացիք դեռ շատ պէտք է մաքաւէին, մինչև այդ ընտարձակ միապետութեան բալոր երկրներին տիրելը բայց գրանք մասնաւոր կունենք էին, որոնց վերջնական ելքը կասկածելի չէր կարող լինել, որովհետեւ թշնամիք պէտք մեծ միաբանութիւն չունեին, Մի քանի քաղաքներ և երկրներ արարացիք մի քանի անդամ նուածեցին, որովհետեւ կրկին և կրկին ապրանամբում էին, Ամէնից իսխոս ընդդիմութեան երկում է թէ իսկական Պերսիստումն են հանդիպել արարացիք, մասնաւոր Ստահրի (Պերսեպոլիս) մերձակայքում ուր Սասանեան տէրութիւնը սկիզբն էր տոել և ուր կենցրոն էր նրա կրօնի, Մի քանի մեծ և փոքր տեղական իշխաններ խաղաղութեամբ վերջացրին արարացիների հետ, Սրանք ամէնքն էլ ներկայացան իրրեւ անկախ իշխաններ,

Յաշկերտ թագաւորը սակայն ողբալի կեանք էր վարում, Իւր կեանքը թագի և տէրութեան համար զոհէլու սիրա չարաւ նա, Մի կուսակալի մօտից փախչում էր միւսի մօտ, Ամենից երկար թուռում է թէ մնացած պիտի լինի Ստահրումը, որանոց և գուրս էր եկել, Արքայական շքեղութեան արտաքին փառքը թողնում էին, որ նա վայելէր, Քըրամներ էին կոխուում նրա անունով, բայց հէնց որ ծանրանում էր վրաները, իսկոյն ճանապարհ էին ձգում, Աերջապէս փախաւ նա իւր տէրութեան վերջնին հիւսիս—արևելեան առհմանը, և այնտեղ Մերքի մօտերքը, թշուառ կերպիւ սպանուեց, նրա 651-ին կամ 652-ին տեղի ունեցած մահուան հանհամանքները ստոյդ յայտնի չեն, բայց այսու ամենայնիւ ստոյդ է երևում, որ Մերքի կուսակալ Մահոյէն խառն է եղել այդ գործում,

Են հանգամանքները, որոնց ներքոյ կործանուեցան Աքեմենեան և Սասանեան տէրութիւնները, ստիպում են մեզ խորհրդածելու գրանց նմանութեան վրայ, չնայելով որ այդ նմանութիւնը առերեւյթու գիպուտական է, բայց հիմնուած է ներքին էութեան համաձայնութեան վրայ,

Ինչպէս Գրանիկոսի ճակատամարտը այն անգամին թշնամու վունգաւորութիւնը ցցոց տուաւ, Խսոսում թագաւորը արևմտեան գաւառները կոր-

ցրեց, Գառւգամելայի կոիւը տէրութիւնը բաժան բաժան արաւ, չնայելով որ այդու յաղթողը տէրութեան երկրներին ամէնին էլ տէր չեղաւ, նոյնն եղաւ գրեթէ և 1000 տարուց յետոյ բուվարի, Կաղամիջայի և նէհաւէնի ճակատամերտներից յետոյ, Եւ ինչպէս փախստական Դարեհը տէրութեան հիւսիսարեւելքում ոչ թէ թշնամեաց, այլ գաւաճան մեծամեծների ձեռքով մեռաւ, այսպէս էլ Յաղկերտը, որ ինչպէս և Դարեհը, գիւցազուն չէր,

Պարսիկ աւագանին արարների վերաբերութեամբ այնքան սակաւ հայրենասիրութիւն և այնքան անպարտաճանաչութիւն ցոյց չտուաւ, որչափ Աղքասանդրի վերաբերութեամբ, արդէն կրօնների խիստ և գիտակցական հակառակութիւնը և արարների բիրտ բարգը արգելում էին նրանց հետ միաբանելու, սակայն այդտեղ էլ չպակասեցան առաջաւոր գաւաճաններ և դասավլեններ թէ բարձր և թէ ցածր ազնուականներից, Պարսից միապետութեան վերջնական նուաճումն արարացիներին աւելի ժամանակ նտուաւ, քան թէ մեծ Մակեդոնացուն, դրա փոխարէն սրանց տիրապետութիւնն էլ աւելի տեսական էր, չ էլ են ականութիւնը պարսիկների վրայ միայն արտաքուստ ազգեց, մինչ արարական կրօնն և արարական բարգը նրանց մեջ ներաթափանցեց:

Սասանեան տէրութեան մի փոքրիկ հատուած սակայն երկար ժամանակ մնաց, Պետութեան ժառանգական սպարապետները (սպահպատ, խսպէհրեդ) Խորասանում, Կարիննեան տնից, քաշուեցան Տաբերիստանի (Մականդարանի) լեռները և իշխացին այնտեղ գեռ 100 տարի, երբեմնապէս ստիպուեցան սակայն Խալիֆներին հարկ վճարելու, Սրանք զրադաշտական կրօնին հաւատարիմ մնացին, Այնտարեթիւը, որ նորա գործ են գնում իրենց դրամների վրայ, շատ հաւանականութեամբ սկզբուում է Յաշկերտի մահուան տարուանից, այսպէս ուրեմն սրանք ըստ երևութիւն իրենց ուղղակի յաջորդ են համարում, Սասանեան թագաւորների,

Ե. Քարամինալ.



Մ Ա ն կ Ա ն կ Ա ն կ Բ Ա ն կ Ա ն

Թթիսսուլի ԱԶԱՏ ՀԱՄԱՍԱՐԱՆԸ.

Տարի և կէս է միայն, որ բիրւսուելում հիմնուել է մի ազատ համալսարան և արգեն գրաւել է շատերի համակրութիւնը, բնելքիայում մինչեւ այս համալսարանի հիմնուելը կային և հին համալսարան, վրանցից

երկուուր, լիէժինը և գենախնը, պահպահում էր կառավարութիւնը, երրորդը, որ լուլէն քաղաքումն է, յատուկ կաթոլիկական է, իսկ չորրորդը հիմնուել է 15 տարի առաջ բրիւսսէլում աղասամիս կառավարութեան ձեռքով։ Այս կառավարութեան անկմամբ վարչութեան զեկը կաթոլիկների ձեռքն անցնելով հետքետէ ընկառ և նոր համալսարանը, ուստի կարիք զգացուեց նոր համալսարանի, որի կազմութեան ձեռնարկեցին մասնաւոր անհատներ։ Աղատ համալսարանն առ այժմ ձգտում է փորձնական գիտութիւնները մշակել մինչեւ այժմն մեծ ուշագրութիւն էր գարձուած իրաւագիտութեան և վիճակայութեան վրայ։ Այս համալսարանում պարտաւորական քննութիւններ չկան, ցանկացաղները կարող են ոտկայն քննուել, երբ կամենան։

Բրիւսսէլի աղատ համալսարանի գուները բայց են անխտիր բոլոր ազգութիւններին և կրօններին պատկանող անհատների համար, այս տարի իսկ այդ համալսարանում ուսանում են գրեթէ ամենայն ազգութիւնների պատկանող երիտասարդներ։ Աղատ են և կանացք աշակերտելու և ուսուցանելու, պատմութեան ուսուցչափետ է հրաւիրուած անգլիացի մի օրինորդ, Գրին անունով։ Դասախոսութեանց լեզուն ֆրանսերէն է, կան և վլամաներէն կարգացողներ առաջիկային պիտի կարգացուին և անգլիերէն զասախօսութիւններ։ Ուսուցչափետներն ըստ մեծի մասին անվարձ են, դասախոսներից շատերը իրենց ապրուստը ճարում են այլ վաստակենքով, ուսանողներից մտագրութիւն կայ տարեկան 50 ֆրանկ վարձ առնելու։ Ուսանողների ապրուստը բրիւսսէլում նստում է մերձաւորապէս տարեկան 1000 ֆրանկ, այժմ մտագրութիւն կայ ընդհանուր ընակարան հաստատել ապրուստն աւելի աժան գարձնելու նպատակով։

Նոր համալսարանը զանազանուում է շներից և իւր վարչութեամբ, որի մէջ ուսանողներն էլ իրենց ներկայացուցիչներն ունին։ Աւարտող ուսանողներին ոչ մրցանագիր է տրուում և ոչ գիտնական աստիճան, որ նորանք պատ են քննութեամբ ստանալու այլ համալսարաններում։ Ուսուցչափետներ ինտերելու ուշք է գարձուում նրանց գիտութեան և ոչ աստիճանի վերայ։

ՃԱՓՈՒՆԱԿԱՆ ԺԱՂԱՎՐԴԻՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ.

Ճափոնիան վերջին երեսուն տարուան ընթացքում մի այնպիսի քաղաքակրթական

յեղափոխութեան է ենթարկուել, որպիսին աներեակայելի է այլ երկրների համար, ընայելով՝ որ գրանք երեք հարիւր տարի է, որ եւրոպական ազգեցութեան տակ են։

Ժողովրդական կրթութիւնը Ճափոնիայում պարտաւորական է։ իւրաքանչիւր ընտանիքի հայր պէտք է անպատճառ իւր որդոցը ժողովրդական գպրոց տայ, ուր կրթութիւնը գրեթէ ձրի է, որովհետեւ տարեկան թոշակը երկու ուուրլու անգամ չէ հասնում, որից սակայն աղատ են աղքատները։ Ճափոնացին եւրոպական քաղաքակրթութեան սորկօրէն հետեւող չեն, նրանք ամենայն ինչ ընտրութեամբ սեփականում են կրթուած զանազան ազգերից և իւրաքանչիւր գիտուածումն ևս իրենց ազգային դրոշը դնում են նոր քաղաքակրթական գործօնների վրայ։ Մանկավարժական գործում ճափոնացին հետեւող են անգլիացոց։ Ճափոնիայում կառավարութիւնը չէ պահում ժողովրդական գպրոցները, այլ գպրոցական ընկերութիւններն և համայնքները։ Դպրոցական գործը վարում են ընտրուած յանձնաժողովներ ու հոգաբարձութիւններ, որոնց անգամների մէջ կան նաև ուսուցիչներ։ Տէրութիւնը նիւթեական նպաստներ չէ տալիս գպրոցներին։ Ժողովրդական գպրոցներում դասասուութիւնը տեսում է ամբողջ տարուան մէջ 10 ամիս շարունակ ամենայն օր առաւօտեան 9—3 կամ 8—3 ժամը։ Արձակուրդները տեսում են 2 տմիս, բայց ամենայն տեղ միաժամանակ չեն, այլ յարմարեցրած տեղական ժողովրդի պարապմանց։

Ժողովրդական գպրոցի համար ուսուցիչներ են պատրաստում ուսուցչանոցները, որոնց հիմնարկութիւնը 25 տարի է Ճափոնիայում։ Ուսուցչափ վարձատրութիւնը բաւարար է, թէպէտ ուսուցչուհիները սակաւ։ Առաջին գպրոցական շրջաններում աղջիկ և տղայ միասին են ուսանում։ գպրոցական կարգապահութիւնը շատ լաւ է, որովհետեւ այդ գործին նպաստաւոր է նրանց ընտրանեկան աւանդական կրթութիւնը, որ անպայման պատկառանք է ուսուցանում առ ծնօղներն և վարժապետները։

Ուսուցման առարկաներն հետեւեալներն են։ բարոյագիտութիւն փոխանակ կրօնի, առաջին գպրոցական տարեշրջաններում ըերանացի աւանդում են կոնփուզիուսի բարոյական իրաւաները, իսկ բարձրագոյն շրջաններում նոյն ուսուցանում են բարոյափրատական դասագրքերով։ Ընթերցանութեան վարժեցնում են ճափոնական գպրոցներում